ՆՈՅ. 18/1 ԴԵԿՏ. 1903.

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 23

# ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագին՝ 10 Ֆր. տարեկան

Հասցէ՝
Ред. на в. " ВЕРАДЗНУТЮНЪ " .— Русе
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“ Roustchouk

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

### ՀԱՅ ՅԵՂ. ՀՆՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Դ. ԸՆԴՀ. ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ

Աշխարհիս երեք ամենաազատ երկիրները ցօղեցան Հայի արիւնով ։

Հպարտ Անգլիան, արի Շուէյցարիան և ազատ Ամերիկան զայրոյթով տեսան, թէ ինչպէս իրանց հիւրընկալ հողը դարձաւ թատր հակամարդկային ոճրագործութիւնների ։

Մի վիրաւոր Ամերիկայում, միւսը Շուէյցարիայում և երեք դիակ Անգլիայում, բոլորն էլ իրանց ազգի ազատութեան նուիրուած անձեր, հինգն էլ Հայ — ահա այդ ոճիրների արդիւնքը ։

Եւ դրանք կատարող ձեռքերը եղել են Հայի ձեռքեր ։

Մարդասպանութի՜ւն, եղբայրասպանութի՜ւն, ազգադաւ ոճրագործութի՜ւն ։

Չափ չունի մեր զայրոյթը, զայրոյթ յանու՛ն Հայութեան, յանու՛ն Ազատութեան, յանու՛ն ընդհանուր թշնամու դէմ մղած ազատարար Գործի ։ Անվերջ կը լինի մեր բողոքը, բողոք ի բոլոր սրտէ և դէպի հարազատ ժողովուրդը ու նրա փրկութիւնը տածած մեր սիրոյ ամբողջ ոյժերով ։

Յանուն Հայութեան և Նրա Ս. Գործի մենք դատապարտելով դատապարտում ենք անզգամ ոճրագործների արիւնարբու արարքը, որ գիտակցաբար թէ ոչ գիտակցաբար յայտնւում է հակազգային ու մարդասպան գործակցութիւն մեր դարևոր ոխերիմ թշնամի Մեծ Մարդասպան Սուլթան Համիդի կառավարութեան ։

Հնչակեան Կուսակցութիւնը, որի նպատակն է եղել գործել և գործում է իր ազգի, իր ժողովրդի ազատութեան համար ամեն բանական լծից և որ միշտ եղել է և է՛ ներկայումս էլ դատապարտող բոլոր եղբայրասպան գործողութիւնների, դնում է քաղաքակիրթ մարդկութեան առաջ և յանձնում Նրա արդար զայրոյթին ու դատապարտութեան այդ Հայ ոճրագործների խմբակին, որ քօղարկւում է յեղափոխական անուան տակ, առաջ մղելու իւկապէս մէկ ազգակործան, հակամարդկային ու յանցապարտ ընթացք ։

Այսուհետև այդ ոճրագործների և նրանց ձեռքը ուղղող հեղինակների անունները աւելի ևս ենթարկուած են անէծքի և արձանագրուած պատմութեան ամօթոյ սիւնի վրայ ընդհանուր քաղաքակիրթ մարդկութեան կողմից ։

Հնչակեան Կուսակցութիւնը յեղափոխական կուսակցութիւն է, և յանուն յեղափոխութեան և յեղափոխական գործունէութեան յայտարարում է, որ իրան յեղափոխական ներկայացնող Ալֆարիտ խմբակը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ խմբակ ոճրագործների, որոնք հագած են յեղափոխական դիմակ աւելի դիւրութեամբ առաջ տանելու համար իրանց ազգադաւ գործողութիւնները։

Անիծեալ Հայ ձեռքեր գաղտագողի հարւած տուին Հայութեան լաւ զաւակներից մի քանիսներին և դրանով իրանք իրանց դուրս հանեցին Հայութեան ծոցից. — Նրանք իրանց դուրս հանեցին մարդկութեան ծոցից։

Չը մոռանալով մեր թանկագին զոհերը, մենք, ի դիմաց Հնչ. Կուսակցութեան, յայտարարում ենք, որ մեր ջանքը, մեր միտքը և մեր սրտի ամբողջ ոյժը, ինչպէս և մեր արիւնը մենք պատրաստ ենք այժմ, ինչպէս եղել ենք միշտ՝ նուիրել Հայ ազգի ազատութեան Գործին, հակառակ թիւրք կառավարութեան և նրա դիմակաւոր ու անդիմակ, գիտակ ու անգիտակ արբանեակների ամեն տարաքարչ, ոճրագործ և՛ արիւնախում գործողութիւններին։

Մենք դիմում ենք անում քաղաքակիրթ Մարդկութեան՝ յայտարարելով, որ նրա մարդկային բարոյական պարտականութիւնն է, որպէս և խաղաղութեան պահանջը՝ լինել համակիր մի դժբաղդ ժողովրդի վերջին ճիգերին՝ ազատելու արեւելեան Մեծ Գազանի ճիրաններից ։

Մենք դիմում ենք անում ընդհանուր Հայութեան՝ չընկճուել ոճրագործների ազգակործան գործողութիւնների առաջ և աւելի եռանդով, աւելի ոյժով առաջ խաղալ դէպի Ս. Գործի ասպարէզը՝ տապալելու համար այն ստրկական վիճակը, որ ստեղծում է նոյն իսկ Հայերիս մէջ նորատիպ Վասակներ և եղբայրասպան հրէշներ ։

---

## «ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ» ՄԱՍԻՆ

«Նոր գործունէութիւնը» արձագանք գտաւ և պարսկահայ ինտելիգենտ շրջաններում։ Հասարակութեան այն խաւերում, ուր բացի անձնական շահի և առօրեայ մանր մունր երևոյթների մասին եղած խօսակցութիւններից, հետաքրքրութեան նիւթ են դառնում նաև ընդհ. հասարակական և քաղաքական խնդիրներ, բաւական ուշադրութիւն է գրաւել Հնչակեան Կուսակցութեան Նոր գործունէութեան առաջադրութիւնը ։

Նրանք, որոնք գիտեն և ընդունակ են ուսումնասիրել ժամանակն ու հանգամանքները, որոնք թափանցում են երևոյթների պատճառների խորքերը, որոնք ունին աւելի դրական, նատիւրալիստական աշխարհհայեացք պատմական երևոյթների վրայ, դրանք, բոլորն էլ մեծ համակրանքով են վերաբերւում Նոր մտքին և սրտանց ողջունում են Հնչակեան Կուսակցութեան Նոր ձեռնարկութիւնը ։

Սակայն, ինչպէս որ սպասելի էր նկատել, պակաս չէ և նրանց թիւը, որոնք իրանց սահմանափակ ուղեղով և նեղ աշխարհհայեացքով, չովինիստի անթափանցիկ ակնոցները աչքերի առաջ բռնած Հայաստան ասելով՝ միայն Տաճկահայաստանի մի քանի որոշ վիլայէթներն են հասկանում և ազատութիւն ասելով՝ այդ վիլայէթների քաղաքական անկախութիւնը, թէկուզ տաճիկ Սուլթանի փոխանակ մի հայ Սուլթան նստած լինի գահի վրայ, Կարինից հսկելու այն ռեժիմի տիրապետութեան, որին հսկում է Պոլսի դահակալ կարմիր Սուլթանը ։

Միւս կողմից, թող ընթերցողը չը զարմանայ եթէ ասեմ որ, գտնւում են այնպիսիներն էլ, որոնք իրանց նախապետական հասկացողութեամբ, դեռ ևս անգիտակ ներկայ իրականութեանց կամ տգէտ քաղաքական խնդիրներում, տակաւին չարունակում են ամեն փրկութիւն Ռուս կառավարութիւնից սպասել, ինչպէս սպասում էին մեր հայրերն ու պապերը ։ Ռուսամոլ այս հասկացողութիւնը աւելի քան անհեթեթ է, մանաւանդ ներկայ րոպէում, երբ Ռուս կառավարութիւնը մեծ աւազակապետի դերը ստանձնած՝ խլեց Հայի դարևոր սեփականութիւնները — Հայ եկեղեցական կալուածները, որով ցոյց տուեց իւր իսկական գոյնը, աւելի որոշ կերպով պարզելով իւր հայակեր քաղաքականութեան ընդգծած ծրագիրը։

Որքան որ ցաւալի է յիշեալ հասկացողութիւնների տէր մարդկանց պատահել, որոնց թիւը, կրկնում ենք, պակաս տոկոս չի կազմում, բայց աւելի քան ցաւալի է երբ պատահում էք ինտելիգենտի և յեղափոխականի կոչում ստանձնած մարդկանց կամ խմբակների, որոնք մի ամբողջ ազգի թշւառ վիճակը յեղափոխելու և բարեկարգելու դերն են ստանձնել, բայց մի կողմից, լինելով մասաւորապէս ոչ բաւականաչափ պատրաստուած այդ կոչման և միւս կողմից լցուած կուսակցական կամ աւելի ճիշդը թայֆայական կրքով, երբեմն անգիտա՛ Հայկական խնդրի ներկայ պահանջներին, երբեմն էլ միմիայն հակառակած լինելու այն բոլոր գաղափարներին և ձեռնարկութեանց, որոնք Հնչակեան անունն են կրում, սկսում են աջ ու ձախ քարեր նետել Հնչակեան Կուսակցութեան կամ Նրա ղեկավարների հասցէին, քննադատել (իբր թէ) Կուսակցութեան գա-

ղափարներն ու գործունէութիւնը, աղաւաղելով և խեղաթիւրելով փաստերն ու Հնչակեան թերթերի խօսքերը և այդպիսով ճգնել շփոթելու ժողովրդի մըտքերը, որպէսզի պահել կարողանան իրանց գոյութիւնը, որպէս զի ծածկել կարողանան իրանց ապիկարութիւնը։

«Հնչակեանները Տաճկահայաստանից ձեռք են վերցրել — ասում են մեր այդ հակառակորդները — այժմ Կովկասում յեղափոխութիւն պիտի սկսեն, Կովկասի հայերին պիտի ապստամբեցնեն, կովկասեան հայկական անկախութիւն պիտի ձեռք բերեն» և այլն և այլն։ Շարունակ այս և այսպիսի խօսքեր են կրկնում դրանց բերաններում, երբեմն լուրջ, երբեմն հեգնութեամբ՝ Նախանձի մաղձը վարագուրելու համար։ Սակայն մի կողմ թողնելով թէ այդպիսի խօսքերով որչափ և ինչպէս են խեղաթիւրում Հնչակեան Կուսակցութեան նոր գործունէութեան գաղափարը, առաջ եմ բերում միայն այն հանգամանքը, որ այդ միենոյն մարդիկ երբ պատահում են ժողովրդի հակառուսական տրամադրութեան, առիթից օգտուելով համակրութիւն ձեռք բերելու համար՝ ասում են որ իրանք են եղել Կովկասի այս կամ այն քաղաքի ցոյցի կազմակերպողները, այս կամ այն տէռօռական գործողութեան կատարողները և այլն և այլն։ Նախ՝ գողութիւն կը լինի որևէ կուսակցութեան կողմից, եթէ նա աչխատի Կովկասի այս կամ այն քաղաքի ցոյցը իրան վերագրել, որովհետև կալուածների գրաւման խնդրով առաջ եկած բոլոր ցոյցերը զուտ ժողովրդական են, անկախ և զերծ այս կամ այն կուսակցութեան նախաձեռնութիւնից։ Երկրորդ՝ ենթադրենք որ այդ այդպէս է, այդ դէպքում ո՞վ է լինում ուրեմն Կովկասի հայութիւնը ապստամբեցնողը, Ռուս կառավարութիւնը հայերի դէմ գրգռողը, այդ խմբակների կուսակցութիւ՞նը, թէ Հնչակեան կուսակցութիւնը, որը իւր գործունէութիւնը հիմնում է բանւորական—սօցիալիստական շարժման վրայ, որը իւր գործունէութեան ոչ թէ զուտ հայկական շարժման գոյն ու կերպարանք է տալիս, այլ իբրև սօցիալիստ յեղափոխական նա միանում է ամբողջ Ռուսաստանի ընդհանուր ժողովրդական շարժման։

Արդ՝ հարցնում ենք, այս ի՞նչ հակասութիւն է։ Մի՞թէ այս փաստը պարզ ապացոյց չէ, որ մեր մրցակիցների գաղափարները նոյնքան յեղյեղուկ են, որքան որ յեղյեղուկ է ագէտ ամբոխի տրամադրութիւնը։

Բայց ինչպէս ի՞նչ են առարկում մեր դէմ հակառակորդները։ Առաջ բերենք այդ առարկութիւններից մի քանիսը, որոնք առերևոյթս փոքր ի շատէ լուրջ են երևում։ Նոքա առարկում են որ իբր թէ անբնական է և բանագբօսիկ կովկասեան շարժման գաղափարը, որ այդ գաղափարը Հնչակեանների մտայածին երևակայութիւնն է, հետևապէս և այդպիսի շարժման ձեռնարկելը կը լինի ոչ միայն արհեստական և անհետևանք, այլ և չարիք բերող։ Այո՛, բանագբօսիկ և արհեստական կը լինէր կովկասեան հայկական շարժումը, եթէ նա ծրագրուած լինէր այնպէս, ինչպէս մեր հակառակորդներն են հասկանում կամ ուզում են հասկանալ և ցոյց տալ միամիտներին. այսինքն եթէ Հնչակեանները քարոզէին ռուսահայերին, որ նոքա ապստամբեն ռուս կառավարութեան դէմ, կուեն նրա միլիոնաւոր զօրքերի դէմ, յաղթեն և հայկական թագաւորութիւն հիմնեն կովկասում։ Սակայն այդ չէ իրականութիւնը։

Հնչակեան Կուսակցութեան ձգտումն ու ցանկութիւնն է տապալած տեսնել ռուսական ցարիզմը, ռուս կառավարչական ներկայ ռէժիմը. և այս ոչ միայն Հնչակեան կուսակցութեան, այլ և Ռուսաստանում ապրող բոլոր ազգերի և ժողովուրդների բանիմաց դասակարգերի և մանաւանդ յառաջդիմական ազատամիտ կուսակցութիւնների ձգտումն ու ցանկութիւնն է։ Ուրեմն կռիւը ոչ թէ հայկական կամ կովկասեան անկախութեան համար է, այլ ընդհանուր ժողովրդական ազատութիւն ձեռք բերելու համար. և այդ կռիւը ոչ թէ պիտի մղէ միայնակ հայ ազգը կամ Հնչակեան Կուսակցութիւնը, այլ պիտի մղեն Ռուսաստանի բոլոր ազգերը և նրանց ազատամիտ, սօցիալ—դէմօկրատ կուսակցութիւնները, աջակցութեամբ այլ ազատամիտ կուսակցութիւնների։ Մի կռիւ, ուրեմն, որը ոչ թէ Հնչակեանների երևակայութիւնն է, այլ լինելով ժամանակակից պահանջ, նա իր մէջ ամփոփում է Ռուս տիրապետութեան տակ գտնուած բոլոր ճնշուած ազգերի և ժողովուրդների միութիւնը։ Այնպէս որ առաջադրուած և արդէն արտայայտուած յեղափոխական շարժումը, ոչ թէ այս կամ այն ազգի, այս կամ այն կուսակցութեան մտացածին ցնորքն է, այլ իրերի բնական բերմամբ առաջ եկած մի պահանջ, մի անհրաժեշտութիւն, որին յետ կասեցնելու կամ կանգնեցնելու համար ապարդիւն կը լինէր ամէն մի փորձ, ամէն մի միջոց։

Թաւրիզ — Սրակ

(Շարունակելի)

## ՆԱՄԱԿ ՍՕՖԻԱԷՆ

13 Նոյ. 903

Իբր երկու տարի առաջ Պետոփ կախաղան բարձրանալէն անմիջապէս յետոյ, «Նարժումի» խմբագիրը յայտարարեց թէ Պետոփ յիշատակը յաւերժացնելու համար, անոր բոլոր գրութիւնները պիտի հրատարակէ ընդարձակ կենսագրականով մը միասին։ Եւ այդ գրութեանց հրատարակութեան համար հանգանակութիւն մը բացաւ։ Ամէն տե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ 22

# ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

## ԹՕԼՍԹՕՅ-ի

թարգմանեց Ռուսերէնէ

Ա. Տ—եան

### ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՐԿԱՒՈՐ Է

Ամէն ընկերութեան, խումբի եւ ընտանիքի մէջ կան անհատներ, որոնք իրար կը գերազանցեն կարգ մը յատկութիւններով, երբեմն իրենց թերութիւններով, կամ այն համակրանքի, երկիւղի, խորշումի, ակնածանքի եւ հիացմունքի համար, զոր պատճառած են։ Անոնք կառաջնորդեն, կը կառավարեն եւ կը նկատուին իբրեւ առաջնորդներ։ Ամէն միջավայրերու եւ պարագաներու մէջ կը տեսնենք անհատներ, որոնք առանց իրաւունք եւ հրաման ունենալու, վճռական ազդեցութիւն կը գործեն զիրենք շրջապատողներուն վրայ։

Ի՞նչ անհաւատալի լաւատեսութեամբ կօրօրուին անոնք, որ կը համարձակին յուսալ թէ այն ինչ որ պէտք է, պիտի կատարուի իր ժամանակին եւ յարմար կերպով, թողլով բոլորը ազատօրէն կազմուած խումբերու, որոնք կրնան ամէն վայրկեան լուծուիլ։ Եւ ասիկա ճիշդ այն պահուն, երբ մասնաւոր չարը պիտի առաջացնէ պատահում եւ երբ սակայն պիտի ուզուի «սպասել իր պէտքերուն համեմատ»։

Ո՞ւր պիտի առաջնորդէ մասնաւոր նախաձեռնութիւնը։ Նոր-Կրանատի մէջ փոքր չափով մը գործադրուած կանոնադրութիւն մը կը սորվեցնէ մեզի զայն. «Կարճատեւ անիշխանական ժամանակաշրջանէ մը վերջը, ճամբաները անգործածելի դարձած, կամուրջները քանդուած, վարժարանները հեռու վրայ ձգուած, նաւահանգիստները աւազով ծածկուած էին, եւ մարդոց ու գոյքերու ապահովութիւն չկար»։ (Էմիլ տը Լավըլէյ)։

Ոչ մէկ լուրջ գիտող պիտի համարձակի թողուլ ընկերութեան կարգաւորումը անգիտակից եւ անծանօթ ույժի մը, որ անձնական հոյակապքներու եւ մասնաւոր շահերու ծնունդ եղող մղում մը պիտի ստանայ։ Ընդհակառակը, լաւ կազմակերպուած իշխանութիւն մը, որ պիտի ղեկավարէ արդիւնաբերութիւնը որոշ սկզբունքներով, արդիւնքներու բաշխումը պիտի կատարէ ազատութեամբ եւ ոչ թէ պէտքերու քմահաճոյքին համեմատ, այսպիսի կազմակերպութեան մը պէտքը պիտի զգացուի աւելի սօցիալիստական, քան թէ ուրիշ ընկերութիւններու մէջ։ Հարկաւոր է իշխանութիւն մը, որ այնքան երկաթեայ պիտի ըլլայ, որքան որ պիտի ծառայէ ընդհանուր բարօրութեան, յառաջդիմութեան, եւ որուն գերագոյն օրէնքը պիտի ըլլայ ոչ թէ «իւրաքանչիւրը իրեն համար» այլ «ամէնը իւրաքանչիւրին համար»։

### ԱՆՀԱՏՆԵՐԸ ԵՒ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԸ

Սօցիալիստները, ինչպէս նաեւ անիշխանականները կը փափաքին սեփականութեան համայնացումը, միայն թէ կը հեռանան տարբեր ճամբաներու՝ հասնելու համար ընդհանուր նըպատակին։ Սօցիալիստը համոզուած ըլլալով որ անհատները նուազ յանցաւոր են քան թէ միջավայրերը, ուր կապրին անոնք, եւ թէ պարագաներն են մանաւանդ պատճառ անոնց թերութիւններուն, կը հարուածէ սիսթէմը, իսկ անիշխանականը, հաւատարիմ իր վարդապետութեան, իր զէնքերը կուղղէ անձնականութիւններու դէմ։

Անոնց «գործով պրօպականտան» աւելի կռիւ է մարդ մարդու դէմ, քան թէ կռիւ նոր ընկերութեան հինին դէմ։ Անձնական իրենց հարուածներով, անոնք անձնական են նաեւ այն շարժառիթներով, որ զիրենք կը մղէ գործելու։ Անոնցմէ շատերը մարդկութեան սիրոյն համար չէ որ կը գործածեն դաշոյն եւ տինամիթ, այլ այն ատելութեամբ ազդուած, որ կը տածեն դէպի քանի մը մասնաւոր անհատները՝ իրենց կրած կարգ մը անարդարութիւններուն պատճառով։ Ազատութեան համար իրենց ունեցած սէրը չառնելու քով կարապետական արհամարհանքով դէպի ամէն տեսակ իշխանութիւն, եւ աս այն պատճառն, որ անոնք աւելի եռանդով կը յարձակին սօցիալիստներու քան թէ քափիթալիզմի վրայ, որ միակ թըշնամին է։ Անոնք միայն բռնութեան կիրարկութեան վրայ վստահութիւն ունին — եւ կը վախնամ որ հոս իրաւունք չունենան — սակայն իրենց զէնքերը կուղղեն անհատներուն դէմ։ Հոն անիրաւ են թէ՝ թաքթիքի եւ թէ՝ բարոյական տեսակէտով։

Երբեք ոեւէ իշխանութիւն չէ ենթարկուած կամովին իրաւունքի պահանջումներուն եւ հրաժարած իր առանձնաշնորհումներէն, առանց ատոր համար ույժով բռնադատուած ըլլալու. այն բոլորը, որ սուրով ձեռք բերուած է, սուրով ալ կը պաշտպանուի։

Ամբողջ պատմութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ արիւնոտ մենամարտը շահերու պայքարին, քաոս մը անիրաւութիւններու եւ սարսափներու, դժընդակ պատկերը մը՝ ձեռք ձգելու իշխանութիւնը եւ սեփականութիւնը։

Եւ այսօրուան առանձնաշնորհեալները աւելի քան թշնամի են բանուորներուն, որոնք ապագան կը ներկայացնեն։ Անգութ տէրերը, ճնշողները, վրէժխնդիր սրտով սպառազինուած՝ պատրաստ են արեան մէջ խեղդելու իրենց սեփականութեան դէմ ուղղուած ամէն հարուած։ Երկու դասակարգեր, որոնց մէջ մարդկային ամէն տեսակ կապեր խզուած են, կը սպասեն այն վայրկեանին, երբ պիտի կրնան սկսիլ սոսկալի պատերազմը, անխնայ պայքարը խորխտ հարստութեան՝ ընդդէմ յուսահատ թշուառութեան։

(Շարունակելի)

զէ հայերը փութացին վաղամեռիկ այդ հայ զինուորին յիշատակը պատուելու համար կարեւոր գումարներ ղրկել։

Մենք թէեւ երբէք չէինք համակրած գործունէութեան այդ եղանակին և Պետոն ուղղակի ազնիւ զոհը կը նկատէինք, սակայն մեր աղգին այդ քաջ զաւակին վերջին յարգանք մը մատուցանելու համար, չմերժեցինք Վարպետի կողմէ եղած առաջարկը, և զերծ կուսակցական ճղճիմ հաշիւներէ, մեր կարողութեան չափով մասնակցեցանք այդ հանդանակութեան՝ առանց կասկած մը իսկ ունենալու թէ կարելի կըլլայ նպատակին չծառայեցնել այդ գումարը։

Անցաւ տարի մը։ Օր մըն ալ լսեցինք թէ Փիլիպէի Դաշնակցականները այդ նպատակին համար հաւաքուած վեց հարիւր ֆրանքը, չենք գիտեր ինչ պատճառով, չէին ուզեր յանձնել Վարպետին, բայց Դաշ. պատասխանատու մարմիններու թելադրութեամբ յանձնուեցաւ անոր։

Անցաւ տարի մըն ալ և դեռ չէ հրատարակուած այդ գիրքը։

Երբ Վարպետի կողմէ գէթ փոքրիկ բացատրութիւն մը սըրուէր այդ յապաղման մասին, ինչ որ էր, գուցէ շատերու մըքին մէջ ծագած կասկածները փարատէին։ Բայց դեռ սպասենք։

Վառօդ

## ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Մտրակ՝ Սոֆիա. — Ձեր նամակը յաջորդ թիւին։

Պահանջ՝ Սուլինա. — Նոյնպէս ձերը։

ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԷԿ 4

ՉԱՐԱԽՕՍ ԹԶՈՒԿԸ

(Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՒ Cie ՀԱՍՑԷԻՆ)

Հնչակեան յեղափոխական շարժումների ամենաքաւուն միջոցներին թիւրք կառավարութիւնը մէկ առանձին եռանդով կրկնապատկել էր իր ջանքը ոչնչացնելու համար Հնչակեան կուսակցութիւնը։ Բայց այդ հղօր յեղափոխական մարմնի վրայ դ սից թափող գնդակներն անազդեցիկ էին յայտնուած։ Այլ եւ ընդհակառակը, այդ կուսակցութեան ձեռքով Զէյթունում առաջացած ապստամբութիւնը մի զարմանալի նոր փայլ ու զօրութիւն էր տալ նրան, որպէս եւ հայկական դատին, ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան աչքին։ Մինչեւ այդ ժամանակ տեղի ունեցած կոտորածներն արնակին յաղթութեան ու փառքի կոյն էին տալիս Զէյթունի լեռների գլխին ծագող նոր արշալոյսին։ Եւրոպական պետութիւնները Հայկական դատը վճռելու նախընթաց օրերս մէջ էին գտնուում։ Սուլթանը զինել էր իր ստրապրութիւնը դնել վերջապէս նրանց գծուլրած բարեփոխումների նախագծի տակ։ Չը նայած մինչ այդ օրը եղած կոտորածներին՝ հայ ժողովրդի սիրտն ուժգնութեամբ բաբախում էր մի յաղթական ու պայծառ յուսով։ Ամենքի աչքին այլ եւս անպարտելի էր այն պատմական փաստը, որ առանց արիւն, առանց կռիւ, առանց զոհողութիւնների ազատութիւն չըկայ եւ որ այդ դէպքում մահն անպամ արշալոյս է անմահութեան։ Ինչպէս ամեն առաջադիմող ժողովրդների մէջ, մեզանում եւս, այն օրերից ի վեր, անհերքելի դարձաւ, որ յեղափոխական գաղափարը տիրացել է հայ մըտքերին, որ նա ստացել է քաղաքացիական իրաւունք, որ նա յայտնուում է միակ ուղի դէպի կեանքի վերծնունդը։ Դէպի աւելի եւ աւելի լայն հորիզոններ, հորիզոններ՝, որոնցից իւրաքանչիւրին հասնելիս՝ ամեն անգամ հմայուած աչքի հանդէպ բացուելու է մարդկութեան անվախճան առաջադիմութեան նոր արեւ։ Այդ էր Հայկական դատի մթնոլորտը, երբ յանդարձ երեւան եկաւ եւրոպական երկու տէրութիւնների, Ռուսաստանի եւ Գերմանիայի, գաղտնի համագործակցութիւնը Հայկական խնդրի դէմ մղուած չորս պետութիւնների հակառակ։ Քաջալերուած եւ զգալով իրան այլ եւս անպատիժ՝ Սուլթանն իր արիւնռանող մահակը գլորեց հայ ժողովրդի գլխին։ Վրայ հասաւ թիւրքյունական պատերազմը եւ Յունաստանի պարտութիւնը հիմնովին վնասեց մեր դատի աջողութեան։ Հայերի հիասթափումը սոսկալի էր։ Յաղթութեան օրը փոխուեց եւ դարձաւ տանջանքի, սգոյ ու մահուան օր։ Այդ ընդհանուր դառն տրամադրութեան զոհ դարձան նոյն իսկ յեղափոխական շարքերից շատեր, եւ փոխարէն աղէտալի ժամերին մէջ ելնելը՝ երբ ամեն յեղափոխական վերջին եռանդը, ջանքը, հոգին ու միտքը, որոնք սարսափեցան պատասխանատուութեան առաջ եւ սկսան իրանց մէջ սրան ու նրան վերագրել «անաջողութիւնների» պատճառը, անաջողութիւնները, որոնք դեռ երէկ նոյն իսկ իրանք հանդարտում էին «յաղթութիւններ»։

Սոլորական հոգեբանական վիճակ ամեն ազգի մէջ՝ պատմական դէպքերի ձախորդ ընթացքի միջոցին։ Մինչդեռ այդ ժամանակ իրանց ներքին ոյժերը չը ջլատելու համար բաւական էր, որ հայ յեղափոխականները գըտնէին աւելի հեռատես ու լրջամիտ եւ իրանց պահպանէին իրանց դիրքի բարձրութեան վրայ, մ՛անդամայն ըմբռնելով, որ իրանց դատի «անաջողութեան» պատճառը յեղափոխական ուղղութեան, ջանքերի ու գործունէութեան աննպատակ ոյժ բարութիւնը չէր, —ո՛չ։ Այդ պատճառը վերոյիշեալ երկու հղօր պետութիւնների սիստէմական հակառակութեան յանկարծակի վճռական ուժգնութիւնն էր, որ հարուած տուեց մեր դատին՝ սրա յուսալիր, բայց եւ ամենափափուկ եւ ամենակրիտիկական ըստ էին։ Եւ անա այդ խաւն ժամանակներին Բ. Դուռը Նազիմի միջոցով փորձեց օգտուել յեղափոխականների շարքերում առաջացած հիասթափութիւնից։ Դրա համար նա մտածեց գործիք դարձնել հայկական այն պատմական յատկութիւնը, որով մեր ազգը կարող է անչափ պարծենալ։ Նազիմը մտածեց հարթեանեռանուէր հեռապատկերով սկսան յեղափոխական գիտակից շարքերուն մէջ մտնալ և անգիտակցաբար առաջ քաշել այն ճամբէն, որ երբէք համապատասխան չէր իրենց զգացումներուն և գաղափարին։ Այդ պարագային էր արդէն որ Պապ-Ալիի ցոյցը կուղար ցնցել անգամ մըն ալ հայութիւնը և Յեղ. գաղափարի հոսանքը առաջ մղել ուժգին կերպով. այնպէս որ կարմիր Սուլթանը բռնադատուեցաւ ստորագրել Մայիսեան ըէֆորմները, որոնք եւրոպական քաղաքակցութեան շահերուն անհամապատասխան գալով չիրագործուեցան։ Զէյթունն էր միւս կողմէն, որ կապտամբէր և հայ պատմութեանէջերը պանծալի յիշատակներով կը զարդարէր։ Այլ սակայն վայրագ թշնամին արիւնի ծարաւէն բռնուած՝ առաջ բերաւ այն սարսափելի կոտորածները, որոնք սարքուած թրքական վայրենի պաշտպանների եւ աւելի քան վայրենի զինուորներու կողմէն՝ արիւնալի տեսարաններ պարզեցին հայկական աշխարհին մէջ։ Հայրենի օճախը ծուխ արձակեց... Աննկարագրելի էր այն վայրագութիւնը, որ գործ կը դրուէր հայ կորիճին և առհասարակ անմեղ ժողովրդին վրայ։ Կորովաբան ատենախօսը յուզիչ կերպով պատկերացնելով այդ սրտամորմոք տեսարանը, շեշտեց այն ակնյայտնի պարագան, որ շատերու կողմէ անտես առնուած է, այն է քըրիստոնեայ փոքրիկ ազգերու պաշտպան կանգնող բռնակալ Ցարին, — այժմ Մեծ Աւազակապետի, —աջակցութիւնը Մեծ Մարդասպանին, որուն հրամանով նահատակուած 300,000 անմեղ զոհերու արեան պատասխանատուութիւնը աբքան որ իրեն, այդ կարմիր Սուլթանին՝ այնքան մըն ալ իր եղբօր բռնակալ Ցարին վրայ կը ծանրանայ։

Կոտորա՞ծ կոտորածի ետեւէ։

Վրայ հասաւ Պանքայի ցոյցը, ուսկից յետոյ կարծես հայի արիւնը անբաւականութեան մարդասէ՞ր կառավարութիւններուն՝ ազատագրելու համար այն դժբախտ ազգը, որ դարեւոր ստրկութեան մէջ, միշտ հալածանքի ենթակայ եղած էր։

Հիասթափութիւնը տիրեց։

Բոլոր անոնք, որ աւելի կատարեալ իրազութիւններու առջեւ գտնուելով՝ ստիպուած, անգիտակցաբար ընդգրկած էին Յեղ. արիւնոտ դրօշը՝ մէկ անգամէն շըլմորեցան և սկսան այդ կոտորածներու, թափուած արիւնին բուն պատճառը որոնել, և գտնուեցան միամիտներ, որ յեղափոխականներու վիզը փաթթեցին մեղքը։ Մինչդեռ բուն թշնամին, միւս կողմէն, աւելի լաւ ըմբռնելով իրեւ վիճակը, ուզեց Յեղափոխութեան ծանր հարուած մը տալ։ Բերդը ներսէն առնել հարկաւոր էր, այդպէս էր մտածած թշնամին։ Եւ ցաւ է ըսել, գտնուեցան վարձկան յեղափոխականներ, որոնք յանձն առին այդ պժգալի դերը կատարել. ու Արփիար մը բաւական եղաւ երկպառակութիւն սերմանել Հնչ. Կուսակցութեան մէջ.

ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՒ Cie ՀԱՍՑԷԻՆ

ՀՆՉԱԿԵԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Տեղւոյս Մասնաճիւղի կողմէ նախապէս հրատարակուած կարմիր յայտարարութիւնները արդէն ցոյց կուտային թէ՝ կիրակի օրը, ժամը 11–ին, սովորական վարժարանի սրահին մէջ տեղի պիտի ունենար Հնչ. հրապարակային ժողովը։

Ժամը 11–նէր, երբ սրահը լեցուիլ սկսած էր խուռն բազմութեամբ։ Կէս ժամէն յետոյ ժողովը բացուեցաւ նախագահ պ. Կ. Սվաճեանի կողմէ։ Օրուան ատենախօսը՝ պ. Հրահատ, կորովի ու առնական շեշտերով ըստ կրնար նախ ակնարկ մը նետել մեր Յեղ. անցեալ դէպքերուն մասին և կանգ առնելով Սասնոյ ապստամբութեան վրայ, բացատրեց թէ ինչպէս քաջարի Սասունցին իր թափած կարմիր արիւնով ազատութեան վեհ գաղափարը պաշտպանեց և Հ. Կ. դատը քայլ մը եւս առաջ մղեց։ Այդ դիւցազնական կռիւն էր որ ծնունդ տուաւ Մայիսեան ըէֆորմներուն։

Յեղ. գաղափարը այդ միջոցին արդէն մեծ ծաւալ ստանալով՝ մուտ գտած էր ամէն խաւի մէջ, այնպէս որ կարդ մը անգոյն ու հակայեղափոխական տարրեր՝ հոսանքէն տարուելովկամ շլանալով ապագայ ազատութեանց զոհողութիւնների ազատութիւն չըկայ եւ որ այդ դէպքում մահն անպամ արշալոյս է անմահութեան։ Ինչպէս ամեն առաջադիմող ժողովրդների մէջ, մեզանում եւս, այն օրերից ի վեր, անհերքելի դարձաւ, որ յեղափոխական գաղափարը տիրացել է հայ մըտքերին, որ նա ստացել է քաղաքացիական իրաւունք, որ նա յայտնուում է միակ ուղի դէպի կեանքի վերծնունդը։ Դէպի աւելի եւ աւելի լայն հորիզոններ, հորիզոններ՝, որոնցից իւրաքանչիւրին հասնելիս՝ ամեն անգամ հմայուած աչքի հանդէպ բացուելու է մարդկութեան անվախճան առաջադիմութեան նոր արեւ։ Այդ էր Հայկական դատի մթնոլորտը, երբ յանդարձ երեւան եկաւ եւրոպական երկու տէրութիւնների, Ռուսաստանի եւ Գերմանիայի, գաղտնի համագործակցութիւնը Հայկական խնդրի դէմ մղուած չորս պետութիւնների հակառակ։ Քաջալերուած եւ զգալով իրան այլ եւս անպատիժ՝ Սուլթանն իր արիւնռանող մահակը գլորեց հայ ժողովրդի գլխին։ Վրայ հասաւ թիւրքյունական պատերազմը եւ Յունաստանի պարտութիւնը հիմնովին վնասեց մեր դատի աջողութեան։ Հայերի հիասթափումը սոսկալի էր։ Յաղթութեան օրը փոխուեց եւ դարձաւ տանջանքի, սգոյ ու մահուան օր։ Այդ ընդհանուր դառն տրամադրութեան զոհ դարձան նոյն իսկ յեղափոխական շարքերից շատեր, եւ փոխարէն աղէտալի ժամերին մէջ ելնելը՝ երբ ամեն յեղափոխական վերջին եռանդը, ջանքը, հոգին ու միտքը, որոնք սարսափեցան պատասխանատուութեան առաջ եւ սկսան իրանց մէջ սրան ու նրան վերագրել «անաջողութիւնների» պատճառը, անաջողութիւնները՝, որոնք դեռ երէկ նոյն իսկ իրանք հանդարտում էին «յաղթութիւններ»։

Սոլորական հոգեբանական վիճակ ամեն ազգի մէջ՝ պատմական դէպքերի ձախորդ ընթացքի միջոցին։ Մինչդեռ այդ ժամանակ իրանց ներքին ոյժերը չը ջլատելու համար բաւական էր, որ հայ յեղափոխականները գըտնէին աւելի հեռատես ու լրջամիտ եւ իրանց պահպանէին իրանց դիրքի բարձրութեան վրայ, մ՛անդամայն ըմբռնելով, որ իրանց դատի «անաջողութեան» պատճառը յեղափոխական ուղղութեան, ջանքերի ու գործունէութեան աննպատակ ոյժ բարութիւնը չէր, —ո՛չ։ Այդ պատճառը վերոյիշեալ երկու հղօր պետութիւնների սիստէմական հակառակութեան յանկարծակի վճռական ուժգնութիւնն էր, որ հարուած տուեց մեր դատին՝ սրա յուսալիր, բայց եւ ամենափափուկ եւ ամենակրիտիկական ըստ էին։ Եւ անա այդ խաւն ժամանակներին Բ. Դուռը Նազիմի միջոցով փորձեց օգտուել յեղափոխականների շարքերում առաջացած հիասթափութիւնից։ Դրա համար նա մտածեց գործիք դարձնել հայկական այն պատմական յատկութիւնը, որով մեր ազգը կարող է անչափ պարծենալ։ Նազիմը մտածեց հարուածը տալ Հնչակեան բերդի ներսից, այսինքն նոյն իսկ հայի եւ նոյն իսկ Հնչակեանի ձեռքով։ Նախագիծը որոշ էր։ Պէտք էր կուսակցութեան անդամների մէջ առաջացնել անվստահութիւն, հեղինակութեան անկում նրա վարիչների նկատմամբ եւ այդպիսով խառնաւոթիւն ու չփոթութիւն սերմանել նրա կարգերում։ Հասնելու համար այդ նպատակին՝ պէտք էր հարուածն ուղղել Կուսակցութեան գլխին, նրա հիմնադիրներից այն մէկի դէմ, որ այն ժամանակ արդէն, ամբողջ ութ-ինը տարի գտնուում էր Կուսակցութեան եւ «Հնչակ»ի գործերի գլուխ եւ որ ամեն ջանք գործ էր դրնում աղէտալի տարին վառ պահել հնչակեանների սրտում նրանց հոտոտն ու յոյսը։ Եւ գտնուեցաւ մէկը, մի հայ, որ ծառայեց Նազիմի սոսկալի քաղաքականութեան եւ դրա համար ընտրեց դայթակղական միջոցներին ամենապայթակղականը — ամբաստանութիւն եւ գլխաւորաբար դրամական ամբաստանութիւն։ Դա մի թակարդ է, որի մէջ շատ հեշտութեամբ է բռնուում, մանաւանդ պատմական դատն ժամերին, հատարակութեան դիւրահաւատ, անհեռատես ու միամիտ մասը։ Ամեն ալգի մէջ, պատմական ձախորդութիւնների միջոցին, հրապարակի վրայ ներքին դիմակաւոր ինքնանդիմակ թշնամին առաջ է շպրտում այդօրինակ մի ստոր ամբաստանութիւն այս կամ այն հատարակական անձի դէմ եւ դա՝ որպէս այդ

որուն տիսուր արդիւնքը պարզ է։ Բայց պ. Ատենախօսը չուզելով ծանրանալ այդ դժբախտ օրերու վրայ, յայտնեց Կուսակցութեանս այնուհետեւ ինքն իր մէջ զօրանալու պարագան մինչեւ 1902 տարին, որ ատեն ժողովրդի կողմէ արտայայտուած միահամուռ ցանկութեան վրայ՝ Միութեան ձեռնարկները ըրին Ալֆարիսանները Դաշնակցութեան հետ, ինչ որ անիրագործելի եղաւ կարգ մը պատճառներով, մինչեւ որ Հնչակեանները ձեռք մեկնեցին և Ամերիկայի մէջ Ալֆարիսաներ ու կողմէ յետին մոքերով ու թաքուն ծրագրով թիւած Միութիւնը իրագործուեցաւ ապետալի հետեւանք մը առաջացնելով։ Պ. Ատենախօսը հարեւանցի կերպով խօսելով այդ մասին՝ մատնանիշ ըրաւ այն դատապարտելի եղանակը, որուն հետեւանքով վիրաւորուածներ ու սպանուածներ եղան։ Իբր պատգամաւոր՝ մէջտեղ դնելով իր և ընկերներուն ցանկութիւնը և Պատգ. ժողովի այդքան երկարաձգումը՝ առաջքը առնելու համար այդ եղբայրասպան դրութեան, յայտնեց նոյնիսկ թէ կարգ մը բացատրութիւններու համար ժողովի կողմէ Լօնտոն Ալֆարիսաներուն գիմում ըրած են, սակայն անոնք արդէն մեկնած են եղեր։ Մէկը միւսին ետեւէն պատահած քստմնելի ոճիրները արդէն բաւական են եղած հաստատելու թէ այդ խմբակը ծրագրած էր այնպիսի դաւ մը, որ բուն թշնամին գոհունակութիւն կը պատճառէր։ Որքան որ այդ դէպքերը զայրոյթ ու կատաղութիւն կրնային ազդել մեր շարքերուն, բայց և այնպէս, պ. Ատենախօսը հնչ. բոլոր օրդաններով, նոր ընտիր կեդրոնի յատուկ ներքնաբերականով և Կուս. հիմնադիրներէն մէկին մասնաւոր նամակէն կտորներ բերելով ապացուցաց թէ հնչ. Կուսակցութիւնը դեմ է եղած եւ դեմ է ներքին մէջ այն եղբայրասպան դրութեան, որ կորստաբեր և կործանարար է հայ յեղ. դատի համար։ Աւելորդ է ըսել որ ա.դ ճակատաբաց յայտարարութիւնը գոհ պիտի ձգէր հասարակութիւնը, որ բուռն ծափահարութեամբ իր համակրութիւնը յայտնեց յարգելի Ատենախօսին։

Այնուհետեւ կանգ առնելով Ռուսահայ կալուածներու խնդրի մասին՝ չատագովեց մեր եղբայրներու յեղափոխական անվեհեր ոգին ու ընդդիմադրութիւնը, և շեշտելով Ցաճկահայ դատին համար մեր մղելիք ընդհ. կռուի պահանջը, մասնաւոր կերպով Կովկասահայերու շարժման անհրաժեշտութիւնը ընդգծեց՝ բացատրելով այն օգուտները, որ կրնանք ստանալ ձեռք տալով բռնակալ Ցարի ճիրաններուն տակ տառապող այն բոլոր ազգերուն, որոնք, ազատութեան ծարաւի, տնտեսական ու քաղաքական լիակատար բարօրութիւն մը վայելելու համար՝ աշակից ըլլալու են նոյն նպատակին համար պայքարող ռուս սոցիալ-դէմոքրատ և այլ յեղ. կուսակցութեանց, որպէսզի խորտակելով Ցարիզմը, բնականաբար տիրող աւելի լաւագոյն կառավարական ձեւի մը շնորհի. Ցաճկահայաստանն ալ նը-պաստաւորուի՝ թէ՛ Ռուսահայ եղբայրներու անմիջական օգնութիւնը վայելելով և թէ՛ ազատուելով բռնակալ Ցարի կառավարութենէն, որ ամենամեծ խոչընդոտն է Հայկ. ընդհ. դատին (հատանոթեան նշաններ)։

Այնուհետեւ մեր սիրելի ընկերը մասնաւորաբար արտասահմանի հայութեան Հայկ. Յեղ. դործին հանդէպ ունեցած պարտականութիւնները շեշտելով՝ առանց վերապահութեան, վնասակար նկատեց այն միտքը, որ դեռ շատեր կը յայտնեն միացնելցնելով Կուսակցութիւնները։ Գաղափարներու լաբիւրինթոս մը պիտի կազմուէր, ըսաւ ան, այդ պարագային, երբ ամէն կարգի մարդիկ ստիպուած ըլլալով միաձեւակ մտածել և իրենց ուրոյն աշխարհայեացքները մէկդի դնել՝ բռնի կերպով հակադնէին իրենց միտքը դէպի մէկ գաղափար։ Ընդհակառակը, օրբօղիցեան, որ մէկը միւսը քննադատելուն և աւելի լաւը գործելուն կը նպաստէ, միշտ օգտակար պիտի ըլլայ, հերիք է որ կռիւը միշտ գաղափարական հողի վրայ ըլլայ և ան ալ ատենախօսութեան սրահին մէջ, կամ մամուլին միջոցով։ Անկէց դուրս կռուի դաշտին մէջ, միևնոյն նպատակին համար կռուողները՝ կողք կողքի՝ պէտք է իրենց զէնքը ուղղեն թշնամիին դէմ, ինչպէս ըրին Վանի կռուի ժամանակ՝ Աւետիսեան, Մարտիկ և Պետոյ։ Համերաշխ գործակցութեան այս եղանակը, զեղեցիկ կերպով բացատրուած պ. Հրահատի կողմէ, բուռն ծափերու արժանացաւ։ Իվերջոյ Ատենախօսը հրաւէր արդարով ընդհ. հայութեան զինուորագրուելու և կարելի եղած միջոցներով նպաստելու հայ դատին, վար իջաւ բեմէն որոնցնպատ ծափահարութիւններու մէջ։ Պ. Նախագահը երկրորդ անգամ հասարակութեան դիմում ըրաւ, որ աղատ են դիտողութիւն ընելուղողները. բայց և ոչ մի հարցապնդում ըլլալով ժողովը փակուած հռչակեց։

Այնուհետեւ ներկաները իրենց մասնաւոր շնորհակալութիւնները, յայտնելով պ. Ատենախօսին, որ ժամէն աւելի ոգեւորած էր զիրենք, մեկնեցան գոհ սրտով և ուրախ տպաւորութեան տակ։

# ՔՐՕՆԻԿ

## ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կովկասահայի վիճակը հետզհետէ վատթարանալու վրայ է։ Ինչ որ մինչեւ յարդ Տաճկահայաստանի մէջ օրինաւորութեան կեղեւի տակ գործ կը դրուին ամենասոսկալի եղանակներ ու անարգարանալի միջոցներ, նոյնը սկսած է գործադրել Սուլթանի անհաւատակից զինակիր եղբայրը իր երկրին մէջ՝ յանուն քրիստոնէութեան։ Բացի նամակներէ, նոյնիսկ ծրարները ալ կը բացուին այժմ, որպէսզի Ցարի հաւատարիմ ծառաները մեծ գաղտնիքներ գտած ըլլալով՝ իւղոտեն իրենց ստամոքսը։

Եկեղեցական կալուածներու գրաւումէն յետոյ, Ճեմարանի, ինչպէս նաեւ միւս հայ դպրոցներու կեանքը մաղէ է կախուած։ Գուցէ փակուին անոնք, ինչպէս կը հաւատան մեզի, փողի չգոյութեան պատճառով։ Իսկ տիրող կարծիքն է թէ Վեհափառը կապէկ անգամ չպիտի ընդունի պետութեան գանձէն, բան մը, որ անշուշտ Սուլթանի արեւշատութեան համար աղօթոց եւ Ցարի կարգ մը հաւատարիմ եպիսկոպոսներուն արդանատանքն ու ծիծաղը կը շարժէ։

— Մեր ծիծաղը կը շարժեն դեռ յամառօրէն դէպի ոճրագործները գուրգուրանք տածող այն անհատները, որոնք իրենց ծակ տրամաբանութեամբ լոյսն ալ չեն տեսներ դժբախտաբար։

Հնչ. Կուսակցութեան վերջին երկուանմեզ զեկերու ոճրագործը, որ ճանչցուած է Լոնտոն, Խարբերդցի Տիգրան Թիրախեան ըսուած (Եօրկի Եանքի կեղծ անունով) հիւծախտաւոր անձն է, որ Ամերիկայի Միալբօրօ քաղաքի Ալֆարիսաներու Մասնաճիւղի անդամ է եղած եւ քանի մը ամիս առաջ Լոնտոն գալով Ալֆարիսաի մը տունը ապաստանած էր։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. Դուռը երկու վարանումներէ յետոյ վերջապէս ամսոյս 13-ին հաղորդած է Ռուսիոյ եւ Աւստրիոյ դեսպաններուն որ այս վերջինները կողմէ ներկայացուած բարենորոգումներու ծրագիրը սկզբունքով կընդունի. սա վերապահութիւնը ընելով սակայն, որ յետնալ բարենորոգումներու գործադրութեան համար չէլմուի այնպիսի միջոցներու, որոնք Թուրքիոյ համար նուաստացուցիչ բռնաւորութիւն ուենենան։

Սուլթանի կողմէն տրուած այս պատասխանը թէեւ լաւ տպաւորութիւն ըրած է դիւանագիտական շրջանակներու վրայ, բայց ընդհանրապէս եւրոպական մամուլը սկեպտիկաբար կը վերաբերուի դէպի Թուրքիոյ խոստումները, որոնք կրնան գործադրուիլ միայն այն ատեն երբ Եւրոպա դիմէ լուրջ եւ խիստ միջոցներու։

Հակառակ վերոյիշեալ երկու տէրութիւններու Պոլսոյի դեսպաններուն առերեւոյթս գործածած խիստ լեզուին, մենք համոզուած ենք որ այսքան երկար ժամանակէ իվեր կատարուող դիւանագիտական խելկատակութիւնները ոչինչ արդիւնք պիտի ունենան։

— Վերջերս Վիէնայի մէջ գումարուած Աւստրիական սոցիալիստական կուսակցութեան համաժողովը որոշած է համաձայնիլ բանակի յաւելումին, պայմանաւ սակայն որ զինուորական ծառայութեան ժամանակաշրջանը երկու տարուան վերածուի։

Բուէարկած է նաեւ որոշում մը, որով կը դատապարտէ Աւստրիոյ եւ Հունգարիոյ ներկայ միութիւնը իբրեւ անօգուտ եւ վնասակար։ Միայն Հունգարիան է որ անկէ կօգտուի, մինչդեռ բոլոր կը ծանրանայ Աւստրիոյ վրայ եւ ան կը ծառայէ միայն տիրող արքայական գերդասանի շահերուն։ Պետական երկուութեան (dualiste) ձեւը արգելք մըն է յառաջադիմութեան համար։ Աւստրիա եւ Հունգարիա, իբրեւ ինքնուրոյն երկիրներ պիտի յաջողին աւելի շուտ համաձայնիլ։

Բանուորական օրէնսդրութեան խնդրին առթիւ համաժողովը որոշեց սոցիալիստական երեսփոխաններու միջոցաւ առաջարկել կարգ մը բարեփոխութիւններու։ Ներմուծումը արդէն գոյութիւն ունեցող օրէնքին մէջ, որպէսզի աշխատանքի համար աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծուի։

Վճռուած է նաեւ կարելիին չափ շատ թուով պատգամաւորներ զրկել յառաջիկայ տարի Ամսթերտամի մէջ գումարուելիք սոց. միջազգային համաժողովին, ուր իմիջի այլոց պիտի քննուին սոցիալիստական քաղաքականութեան հիմնական սկզբունքները։

---

Միանգամ ընդ միշտ վերջ դնելու համար Վանայի փալատին տարը զրպարտութիւններուն, մենք կը յայտարարենք որ եթէ ո՛ւեւէ իրական փաստ ունի իր անձին դէմ լարուած դատադրութեան մասին «վերանոութիւն» ի «խմբակի» կողմէն, թող անմիջապէս հրապարակէ եւ հաստատէ։ Հակառակ պարբերական պիտի տան զանազան օրինական միջոցներով հերքել տալ իր ըսածը։

---

Կը փնտռուին երկու անձեր՝ Պետրոս Մերտինեան եւ Առաքել Մելիքեան, Շապին-Գարահիսարէն Աղուանիա գիւղէն, որոնք երեք տարիէ իվեր Ամերիկա մեկնած են եւ կը կարծուի թէ ժամանակ մըն ալ Փրովիտէնս մնացած են։

Ցիշեալներուն ո՛ւր գտնուիլը եւ կամ հացէները գիտցողները թո՛ղ հաճին իմացնել խմբագրութեանս եւ կամ Վառնա՝ Վարդան Սուքիասեանի։

---

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печатница Б. Н. Малджиевъ—Русе

---

գործիչին վարկից ցնելու համար, նոյնպէս եւ վնասելու այն գործին ու նպատակին, որին ծառայում է նա։ Մտաբերեցէք զրէյֆուսեան գործում այն ամբաստանութիւնները, որ ուղղուում էին օրը հաբիւր անգամ — եւ մինչեւ այսօր իսկ — Էմիլ Զոլայի պէս մէկի դէմ, որը ինչքան մեծ է իբրեւ գրող, նոյնքան էլ բարձր էր իբրեւ բարոյական անձ։ Նրա փաստաբանի՝ Լաբորի՝ նոյնպէս, Ժ. Ժորէս նշանաւոր սոցիալիստը՝ նոյնպէս, հրաչակաւոր Ժ. Կլէմանսօ՝ նոյնպէս, եւ՝ այլն եւ այլն...։ Եւ ամբաստանում էր, թէ դրանք ուրացել են իրանց ազգը, «ծախել» իրանց հայրենիքը, թէ դրանցից մէկը իւրացրել է այսչափ միլիոն ֆրանկ, երկրորդն՝ այսչափ, երրորդը, չորրորդը եւ այլն այսչափ եւ այսչափ։ Ամեն ազգի մէջ զրպարտիչները նմանօրինակ զէնքեր ունեն։ Նոյն դրամական ամբաստանութեան զէնքը գործածուեց նաեւ մեր դէմ։ Հայերի եւ յեղափոխականների ընդհանուր չփոթութեան միջոցին, որոնց պատճառները ներկայացրինք աւելի վեր, գտնուեցան միամիտներ ու հիասթափուածներ, որոնք առակներ լսելով՝ մոլորուեցան, եւ Կուսակցութեան մէջ առաջացան պառակտումներ։ Մի բան էլ կանգ առնենք այստեղ։

(Շարունակելի)

---

սը Հնչ. բոլոր օրդաններով, նոր ընտիր կեդրոնի յատուկ ներքնաբերականով և Կուս. հիմնադիրներէն մէկին մասնաւոր նամակէն կտորներ բերելով ապացուցաց թէ Հնչ. Կուսակցութիւնը դեմ է եղած եւ դեմ է ներքին մէջ այն եղբայրասպան դրութեան, որ կորստաբեր և կործանարար է հայ յեղ. դատի համար։ Աւելորդ է ըսել որ ա.դ ճակատաբաց յայտարարութիւնը գոհ պիտի ձգէր հասարակութիւնը, որ բուռն ծափահարութեամբ իր համակրութիւնը յայտնեց յարգելի Ատենախօսին։

Այնուհետեւ կանգ առնելով Ռուսահայ կալուածներու խնդրի մասին՝ չատագովեց մեր եղբայրներու յեղափոխական անվեհեր ոգին ու ընդդիմադրութիւնը, և շեշտելով Ցաճկահայ դատին համար մեր մղելիք ընդհ. կռուի պահանջը, մասնաւոր կերպով Կովկասահայերու շարժման անհրաժեշտութիւնը ընդգծեց՝ բացատրելով այն օգուտները, որ կրնանք ստանալ ձեռք տալով բռնակալ Ցարի ճիրաններուն տակ տառապող այն բոլոր ազգերուն, որոնք, ազատութեան ծարաւի, տնտեսական ու քաղաքական լիակատար բարօրութիւն մը վայելելու համար՝ աշակից ըլլալու են նոյն նպատակին համար պայքարող ռուս սոցիալ-դէմոքրատ և այլ յեղ. կուսակցութեանց, որպէսզի խորտակելով Ցարիզմը, բնականաբար տիրող աւելի լաւագոյն կառավարական ձեւի մը շնորհի. Ցաճկահայաստանն ալ նը-պաստաւորուի՝ թէ՛ Ռուսահայ եղբայրներու անմիջական օգնութիւնը վայելելով և թէ՛ ազատուելով բռնակալ Ցարի կառավարութենէն, որ ամենամեծ խոչընդոտն է Հայկ. ընդհ. դատին (հատանոթեան նշաններ)։

Այնուհետեւ մեր սիրելի ընկերը մասնաւորաբար արտասահմանի հայութեան Հայկ. Յեղ. դործին հանդէպ ունեցած պարտականութիւնները շեշտելով՝ առանց վերապահութեան, վնասակար նկատեց այն միտքը, որ դեռ շատեր կը յայտնեն միացնելցնելով Կուսակցութիւնները։ Գաղափարներու լաբիւրինթոս մը պիտի կազմուէր, ըսաւ ան, այդ պարագային, երբ ամէն կարգի մարդիկ ստիպուած ըլլալով միաձեւակ մտածել և իրենց ուրոյն աշխարհայեացքները մէկդի դնել՝ բռնի կերպով հակադնէին իրենց միտքը դէպի մէկ գաղափար։ Ընդհակառակը, օրբօղիցեան, որ մէկը միւսը քննադատելուն և աւելի լաւը գործելուն կը նպաստէ, միշտ օգտակար պիտի ըլլայ, հերիք է որ կռիւը միշտ գաղափարական հողի վրայ ըլլայ և ան ալ ատենախօսութեան սրահին մէջ, կամ մամուլին միջոցով։ Անկէց դուրս կռուի դաշտին մէջ, միևնոյն նպատակին համար կռուողները՝ կողք կողքի՝ պէտք է իրենց զէնքը ուղղեն թշնամիին դէմ, ինչպէս ըրին Վանի կռուի ժամանակ՝ Աւետիսեան, Մարտիկ և Պետոյ։ Համերաշխ գործակցութեան այս եղանակը, զեղեցիկ կերպով բացատրուած պ. Հրահատի կողմէ, բուռն ծափերու արժանացաւ։ Իվերջոյ Ատենախօսը հրաւէր արդարով ընդհ. հայութեան զինուորագրուելու և կարելի եղած միջոցներով նպաստելու հայ դատին, վար իջաւ բեմէն որոնցնպատ ծափահարութիւններու մէջ։ Պ. Նախագահը երկրորդ անգամ հասարակութեան դիմում ըրաւ, որ աղատ են դիտողութիւն ընելուղողները. բայց և ոչ մի հարցապնդում ըլլալով ժողովը փակուած հռչակեց։

Այնուհետեւ ներկաները իրենց մասնաւոր շնորհակալութիւնները, յայտնելով պ. Ատենախօսին, որ ժամէն աւելի ոգեւորած էր զիրենք, մեկնեցան գոհ սրտով և ուրախ տպաւորութեան տակ։

# ՔՐՕՆԻԿ

## ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կովկասահայի վիճակը հետզհետէ վատթարանալու վրայ է։ Ինչ որ մինչեւ յարդ Տաճկահայաստանի մէջ օրինաւորութեան կեղեւի տակ գործ կը դրուին ամենասոսկալի եղանակներ ու անարգարանալի միջոցներ, նոյնը սկսած է գործադրել Սուլթանի անհաւատակից զինակիր եղբայրը իր երկրին մէջ՝ յանուն քրիստոնէութեան։ Բացի նամակներէ, նոյնիսկ ծրարները ալ կը բացուին այժմ, որպէսզի Ցարի հաւատարիմ ծառաները մեծ գաղտնիքներ գտած ըլլալով՝ իւղոտեն իրենց ստամոքսը։

Եկեղեցական կալուածներու գրաւումէն յետոյ, Ճեմարանի, ինչպէս նաեւ միւս հայ դպրոցներու կեանքը մաղէ է կախուած։ Գուցէ փակուին անոնք, ինչպէս կը հաւատան մեզի, փողի չգոյութեան պատճառով։ Իսկ տիրող կարծիքն է թէ Վեհափառը կապէկ անգամ չպիտի ընդունի պետութեան գանձէն, բան մը, որ անշուշտ Սուլթանի արեւշատութեան համար աղօթոց եւ Ցարի կարգ մը հաւատարիմ եպիսկոպոսներուն արդանատանքն ու ծիծաղը կը շարժէ։

— Մեր ծիծաղը կը շարժեն դեռ յամառօրէն դէպի ոճրագործները գուրգուրանք տածող այն անհատները, որոնք իրենց ծակ տրամաբանութեամբ լոյսն ալ չեն տեսներ դժբախտաբար։

Հնչ. Կուսակցութեան վերջին երկուանմեզ զեկերու ոճրագործը, որ ճանչցուած է Լոնտոն, Խարբերդցի Տիգրան Թիրախեան ըսուած (Եօրկի Եանքի կեղծ անունով) հիւծախտաւոր անձն է, որ Ամերիկայի Միալբօրօ քաղաքի Ալֆարիսաներու Մասնաճիւղի անդամ է եղած եւ քանի մը ամիս առաջ Լոնտոն գալով Ալֆարիսաի մը տունը ապաստանած էր։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. Դուռը երկու վարանումներէ յետոյ վերջապէս ամսոյս 13-ին հաղորդած է Ռուսիոյ եւ Աւստրիոյ դեսպաններուն որ այս վերջինները կողմէ ներկայացուած բարենորոգումներու ծրագիրը սկզբունքով կընդունի. սա վերապահութիւնը ընելով սակայն, որ յետնալ բարենորոգումներու գործադրութեան համար չէլմուի այնպիսի միջոցներու, որոնք Թուրքիոյ համար նուաստացուցիչ բռնաւորութիւն ուենենան։

Սուլթանի կողմէն տրուած այս պատասխանը թէեւ լաւ տպաւորութիւն ըրած է դիւանագիտական շրջանակներու վրայ, բայց ընդհանրապէս եւրոպական մամուլը սկեպտիկաբար կը վերաբերուի դէպի Թուրքիոյ խոստումները, որոնք կրնան գործադրուիլ միայն այն ատեն երբ Եւրոպա դիմէ լուրջ եւ խիստ միջոցներու։

Հակառակ վերոյիշեալ երկու տէրութիւններու Պոլսոյի դեսպաններուն առերեւոյթս գործածած խիստ լեզուին, մենք համոզուած ենք որ այսքան երկար ժամանակէ իվեր կատարուող դիւանագիտական խելկատակութիւնները ոչինչ արդիւնք պիտի ունենան։

— Վերջերս Վիէնայի մէջ գումարուած Աւստրիական սոցիալիստական կուսակցութեան համաժողովը որոշած է համաձայնիլ բանակի յաւելումին, պայմանաւ սակայն որ զինուորական ծառայութեան ժամանակաշրջանը երկու տարուան վերածուի։

Բուէարկած է նաեւ որոշում մը, որով կը դատապարտէ Աւստրիոյ եւ Հունգարիոյ ներկայ միութիւնը իբրեւ անօգուտ եւ վնասակար։ Միայն Հունգարիան է որ անկէ կօգտուի, մինչդեռ բոլոր կը ծանրանայ Աւստրիոյ վրայ եւ ան կը ծառայէ միայն տիրող արքայական գերդասանի շահերուն։ Պետական երկուութեան (dualiste) ձեւը արգելք մըն է յառաջադիմութեան համար։ Աւստրիա եւ Հունգարիա, իբրեւ ինքնուրոյն երկիրներ պիտի յաջողին աւելի շուտ համաձայնիլ։

Բանուորական օրէնսդրութեան խնդրին առթիւ համաժողովը որոշեց սոցիալիստական երեսփոխաններու միջոցաւ առաջարկել կարգ մը բարեփոխութիւններու։ Ներմուծումը արդէն գոյութիւն ունեցող օրէնքին մէջ, որպէսզի աշխատանքի համար աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծուի։

Վճռուած է նաեւ կարելիին չափ շատ թուով պատգամաւորներ զրկել յառաջիկայ տարի Ամսթերտամի մէջ գումարուելիք սոց. միջազգային համաժողովին, ուր իմիջի այլոց պիտի քննուին սոցիալիստական քաղաքականութեան հիմնական սկզբունքները։

---

Միանգամ ընդ միշտ վերջ դնելու համար Վանայի փալատին տարը զրպարտութիւններուն, մենք կը յայտարարենք որ եթէ ո՛ւեւէ իրական փաստ ունի իր անձին դէմ լարուած դատադրութեան մասին «վերանոութիւն» ի «խմբակի» կողմէն, թող անմիջապէս հրապարակէ եւ հաստատէ։ Հակառակ պարբերական պիտի տան զանազան օրինական միջոցներով հերքել տալ իր ըսածը։

---

Կը փնտռուին երկու անձեր՝ Պետրոս Մերտինեան եւ Առաքել Մելիքեան, Շապին-Գարահիսարէն Աղուանիա գիւղէն, որոնք երեք տարիէ իվեր Ամերիկա մեկնած են եւ կը կարծուի թէ ժամանակ մըն ալ Փրովիտէնս մնացած են։

Ցիշեալներուն ո՛ւր գտնուիլը եւ կամ հացէները գիտցողները թո՛ղ հաճին իմացնել խմբագրութեանս եւ կամ Վառնա՝ Վարդան Սուքիասեանի։

---

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печатница Б. Н. Малджиевъ—Русе